ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
YEREVAN STATE UNIVERSITY

СТУДЕНЧЕСКОЕ НАУЧНОЕ ОБЩЕСТВО
STUDENT SCIENTIFIC SOCIETY

ISSN 1829-4367

СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ СНО ЕГУ

МАТЕРИАЛЫ ЕЖЕГОДНОЙ НАУЧНОЙ СЕССИИ 2015 ГОДА

COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES OF YSU SSS

PROCEEDINGS OF THE ANNUAL SCIENTIFIC SESSION OF 2015

1.5 (15)

Общественные науки (Теология, востоковедение, история)

Social Sciences (Theology, Oriental Studies, History)

ЕРЕВАН - YEREVAN
ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ - YSU PRESS
2016

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ISSN 1829-4367

ԵՊՀ ՈՒԳԸ ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

2015 Թ. ՏԱՐԵԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՆՅՈՒԹԵՐ

1.5 (15)

Հասարակական գիտություններ
(Աստվածաբանություն, արևելագիտություն, պատմություն)

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2016

Հրատարակվում է ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ
Издается по решению Ученого совета ЕГУ
Published by the resolution of the Academic Council of YSU

Խմբագրական խորհուրդ՝

պ.գ.դ., պրոֆ. Է. Մինասյան
պ.գ.դ., պրոֆ. Ա. Ստեփանյան
պ.գ.թ., պրոֆ. Պ. Հովհաննիսյան
պ.գ.թ., դոց. Հ. Գրիգորյան
բ.գ.թ., դոց. Ռ. Մելքոնյան
բ.գ.թ., դոց. Վ. Ոսկանյան
պ.գ.թ. Գ. Հարությունյան

Редакционная коллегия:

д.и.н., проф. Э. Минасян
д.и.н., проф. А. Степанян
к.и.н., проф. П. Ованисян
к.и.н., доц. О. Григорян
к.ф.н., доц. Р. Мелконян
к.ф.н., доц. В. Восканян
к.и.н. Г. Арутюнян

Editorial Board

DSc, Prof. E. Minasyan
DSc, Prof. A. Stepanyan
PhD, Prof. P. Hovhannisyan
PhD, Associate Prof. R. Melkonyan
PhD, Associate Prof. V. Voskanyan
PhD G. Harutyunyan

Հրատարակիչ՝ ԵՊՀ հրատարակչություն
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ալ. Մանուկյան 1, (+374 10) 55 55 70, publishing@ysu.am

Հրատարակության նախապատրաստող ստորաբաժանում՝ ԵՊՀ ուսանողական գիտական ընկերություն
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ալ. Մանուկյան 1, (+374 60) 71 01 94,
Էլ. փոստ՝ sss@ysu.am
ԵՊՀ ՈՒԳԸ հրատարակումների կայք՝ www.ssspub.ysu.am.

Ժողովածուն հրատարակվում է Հայաստանի երիտասարդական հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ:

Ելենա Զոհրաբյան
ԵՊՀ, Հայագիտական հետազոտությունների ինստիտուտ, մագիստրանտ
Գիտ. ղեկավար՝ պ.գ.թ., Մ. Հովհաննիսյան
Էլ. փոստ՝ elenazohrabyan@gmail.com

ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱԿԱՀԱՅ ԻՆՖՈՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԽՈՋԱԼՈՒԻ ԽՆԴԻՐԸ ՀԱՄԱՑԱՆՑՈՒՄ

21-րդ դարը բաց է, հասարակությունը դարձել է տեղեկատվություն սպառող և շատ արագ է ընկալում ցանկացած ինֆորմացիա, իսկ ժամանակակից աշխարհում պատերազմելու և հաղթելու հիմնական զենքերից մեկն էլ դարձել է տեղեկատվությունը: Այժմ արդեն կարևորվում է ոչ միայն դրա լիարժեք տիրապետումը, այլ նաև տարաբնույթ ձևաչափերով դրա կիրառումը: Խնդիր, որը կարող է առաջին հայացքից աննշան տեղեկատվությունը վերածել սահմռկեցուցիչ մի իրողության: Հոդվածում Խոջալուի խնդրի համատեքստում անդրադարձ կկատարենք Ադրբեջանի հակահայկական ինֆոքաղաքականության համակարգին: Համեմատական կտանենք հայկական կողմից տարվող հակաքարոզչության հետ, կներկայացնենք երկու կողմի խնդիրներր, քարոզչական մեթոդներր, բացթողումներն ու առավելություններր: Ներկայումս թերևս հակամարտությունր գտնվում է «սառած» փուլում, սակայն փոխհրաձգությունը շարունակվում է ոչ միայն հակառակորդի հետ շփման գոտում, այլ նաև վիրտուալ դաշտում՝ վերածելով լուրջ քարոզչական հակամարտության: Մի երևույթ, որն օրեցօր նոր զարգացումներ է ստանում, առաջ բերելով ՀՀ և ԼՂՀ ազգային անվտանգության համար նոր մարտահրավերներ:

Խոջալուի թեմայի արդիականությունն այն է, որ Ադրբեջանը պետական մակարդակով շարունակում է լայնամասշտաբ քարոզչություն ծավալել Խոջալուի դեպքերի շուրջ[1]՝ աշխարհին ներկայացնելով դրանք որպես հայերի կողմից իրականացված ցեղասպանություն: Հազարավոր բազմալեզու տպագիր գրքերով, կայքերով, հոդվածներով, հիմնադրամներով փորձ է կատարվում հակահայկական մտածողություն արմատավորել ոչ միայն ադրբեջանցիների, այլև աշխարհի՝ մասնավորապես Մինսկի հանձնախմբի երկրների հանրության գիտակցության մեջ: Ադրբեջանի արտաքին քաղաքականության գերխնդիրն է հաստատել Լեռնային Ղարաբաղում իր գերակայությունը, որի բաղադրիչ քայլերից մեկը Խոջալուի խեղաթյուրված դեպքերի շուրջ լայնամասշտաբ քարոզչությունն է: Արդեն երկու տասնամյակ ադրբեջանական քարոզչությունը փորձում է համաշխարհային հանրությանը համոզել, որ հայերը Խոջալուում ադրբեջանցիների ցեղասպանություն են իրականացրել: Դեռ ավելին՝ ամեն տարի փետրվարի 28-ն Ադրբեջանն ու Թուրքիան նշում են իբրև «ադրբեջանցիների ցեղասպանության օր», այնինչ Խոջալուում գրոհն սկսվել է փետրվարի 25-ին ժամը 23:00-ին և ավարտվել փետրվարի 26-ին առավոտյան 4-ին[2]: Նպատակը մեկն է թերևս՝ հավասարության նշան դնել անցյալ դարասկզբին Օսմանյան Թուրքիայում կազմակերպված հայկական ջարդերի, հետագայում նաև՝ Սումգայիթում, Բաքվում, Կիրովաբադում ու ադրբեջանական մյուս բնակավայրերում ադրբեջանցի հրոսակների հայազգի բնակչության նկատմամբ կիրառած սպանդի, բռնությունների ու տեղահանման միջև: Այսինքն, պարզ է դառնում, որ մենք գործ ունենք Հայաստանի դեմ տարվող ագրեսիվ ու ինտենսիվ քարոզչության հետ՝

[1] 1992 թ. սկզբին ԼՂՀ-ի համար օրակարգային առաջին խնդիրը հանրապետության՝ խորհրդային վերջին տարիներին ադրբեջանաբնակ դարձած գյուղերում տեղակայված ռազմական հենակետերի ճնշումն էր: Դրանցից օրն ի բուն ռմբակոծվում էին շրջակա հայկական գյուղերն ու քաղաքները: Խոջալու բնակավայրը նման հենակետերից էր: Խոջալուից ամիսներ շարունակ «Գրադ» և «Ալազան» տիպի հրթիռային կայաններից օր ու գիշեր հրետակոծվում էին մայրաքաղաք Ստեփանակերտը և հարակից բնակավայրերը: 1992 թ. Խոջալուն ռազմական կարևոր նշանակություն ուներ: Շուշի-Աղդամ ճանապարհի հենց մեջտեղում գտնվող Խոջալուն հարմար ռազմահենակետ էր մի կողմից Ասկերանը, մյուս կողմից Ստեփանակերտը աքցանի մեջ առնելու համար: Դրա համար էլ Բաքվի իշխանությունները հոգ էին տանում, որ Խոջալուն հարձակողական զենքի մեծ պահեստ ունենա և համապատասխան համակազմ: Խոջալուում տեղաբաշխվել էին ՕՄՕՆ-ի զորքերը, բայց հենց իրենց էությամբ և ծագումով դրանք անօրինական խմբավորումներ էին: Այդ ժամանակ ադրբեջանական բանտերից արագ-արագ բաց էին թողնում քրեական հանցագործներին, ջոկատներ էին ձևավորում, զենք էին բաժանում, համազգեստ էին հագցնում և ուղարկում Ղարաբաղ: Բաքուն մշակել էր հետևյալ ռազմավարությունը. Աղդամից ու Խոջալուից միաժամանակյա գրոհ պիտի կազմակերպվեր Ասկերանի ուղղությամբ, իսկ Ասկերանի գրավումից հետո Շուշիից ու Ջան-Հասանից չընդհատվող գնդակոծության տակ պիտի սկսվեր Ստեփանակերտի վերջնական պաշարումը: Այս վտանգը չեզոքացնելու միակ միջոցը Խոջալուի գրավումն էր: Ադրբեջանը զենք, զինամթերք, և միաժամանակ մարդկային լուրջ ռեսուրսներ էր կենտրոնացնում Խոջալուում:

[2] **Մանասյան Ա., Ղևոնդյան Ա.**, Լեռնային Դարաբաղ, ինչպես է դա եղել, Երևան, 2010, էջ 37:

բազմաթիվ կեղծիքներով և խեղաթյուրումներով: Ադրբեջանը կեղծիքներ է տարածում բոլոր հնարավոր ձևերով, նշում են հատուկ հիմնադրամներ, ինֆորմացիոն աղբյուրներ, որոնք իբրև թե համապատասխան տեղեկատվություն են տրամադրում Խոջալուի դեպքերի վերաբերյալ՝ որպես աղբյուր: Հայկական իրականության մեջ վերջին տարիների ընթացքում տեղեկատվական տեխնոլոգիաների օրավուր աճող պատկերը բերեց նրան, որ խնդրո առարկայի շուրջ պատրաստված գիտահանրամատչելի տպագիր ուսումնասիրությունները, տեսանյութերը շաղկապված սկսեցին ներկայացվել համացանցում, որը լուրջ հակադարձում եղավ ադրբեջանական կեղծիքին: Սակայն դեռևս կան շատ անելիքներ, և հայկական կողմը պետք է օգտագործի բոլոր հնարավոր միջոցները, ռեսուրսները, որպեսզի կարողանա կեղծիքին դեմ դուրս գալ ճշմարիտ ու հիմնավորված փաստերով: Ըստ մասնագետների, կեղծիքը չեզոքացնելու և իրական փաստերը միջազգային հանրությանը հասցնելու միակ ձևը փաստերի ճշգրտության մեջ է, իսկ այդ առումով վստահ կարող ենք ասել, որ արդեն իսկ հաղթել ենք: Իսկ եթե Բաքուն Խոջալու քաղաքում կատարված դեպքերին տալիս է գեղասպանություն գնահատականը, ապա այսքան տարիներ կատարված ուսումնասիրությունների, փաստերի, տվյալների արդյունքից ելնելով՝ միանշանակ կարող ենք ասել որ դա «ինքնացեղասպանություն» է եղել:

Հայկական և ադրբեջանական կողմերի միջև 1994 թ. զինադադարի[1] կնքումից սկսած՝ տեղեկատվական քաղաքականությունը, մնալով հակամարտային հաղորդակցման տրամաբանության շրջանակներում, մտավ նոր՝ հետպատերազմյան շրջան:

1988 թ. սկսած Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի շուրջ թե՛ ադրբեջանական, և թե՛ հայկական կողմերն իրականացնում են տարատեսակ քարոզչություն և հակաքարոզչություն: Ադրբեջանական և թուրքական քարոզչությունն ակտիվորեն օգտագործում է համացանցային ռեսուրսներն իրենց շահերն առաջ մղելու, Հայաստանը և հայությանը վարկաբեկելու նպատակով: Հարևան պետություններն իրենց քարոզչության համար մարդկային և ֆինանսական լուրջ ռեսուրսներ են ծախսում: Խնդիր, որը մի քանի տարի առաջ դժվարությամբ հաղթահարվող մրցակցություն էր[2]: Անցած տարիների ընթացքում երկուստեք տարվող «քարոզչական պատերազմների» և դրանց արդյունքների նախնական ուսումնասիրությունը բերում է այն եզրակացության, որ թեև ադրբեջանական կողմը քիչ թե շատ մշակված մոտեցում ունի այս ոլորտում, այդուհանդերձ, չի կարողանում համոզիչ և լիակատար կերպով ձևակերպել իր տեսակետները, չնայած քարոզչական աշխատանքի ինտենսիվությանն ու պետական հովանավորությանը: Ակնհայտ է, որ մեր հանրության դեմ ուղղված տեղեկատվական մարտահրավերները և խնդիրները չեն սահմանափակվում միայն ադրբեջանական գործոնով: Հարկ է շեշտել, որ ինչպես ԼՂՀ-ի շուրջ զինված հակամարտությունում, այնպես էլ ներկա տեղեկատվական պատերազմում Ադրբեջանը պահպանել է իր՝ ագրեսորի կարգավիճակը: Թեև տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը հնարավորություն տվեց Ադրբեջանին ընդլայնել տեղեկատվության տարածման ուղիները, նորացնել ինֆորմացիոն «զինանոցը» և մեծացնել ազդեցության լսարանը, այնուամենայնիվ իրենց սպասելիքները դեռևս չեն արդարացվում:

Ադրբեջանում տեղեկատվական գործողությունների ռազմավարական մեթոդների ակտիվ փնտրտուքը հատկապես սկսվեց 1998-2002 թթ.: Մասնավորապես, կրկնապատկվեց Խոջալուի իրադարձությունների ժամանակ ադրբեջանցի ու թուրք մեցխեթցի զոհերի թիվը, և տեղեկատվական շրջանառության մեջ դրվեց 613 թիվը[3]: Այնուհետև 1998 թ. մարտին Հ. Ալիևի կողմից «ադրբեջանցիների ցեղասպանության մասին» հրամանագիր ստորագրվեց: Այդ ընթացքում հայկական կողմը թերահավատորեն էր մոտենում ադրբեջանցիների կողմից իրականացվող այդ քայլերին, թերագնահատում էր հակառակորդին, քանի դեռ իրավիճակը չհասավ գագաթնակետին, և քանի դեռ իրական վտանգն իրեն զգացնել չտվեց: Բացի դրանից, որ ադրբեջանական դպրոցական դասագրքերում հստակ տեղ ունեն հայատյացություն սերմանող տեքստերը, Ադրբեջանում Հ. Ալիևի հիմնադրամի կողմից պարբերաբար կազմակերպվում են «Խոջալուն երեխաների աչքերով» խորագրով շարադրությունների կամ կերպարվեստի մրցույթներ, հաղթող երեխաները ստանում են խրախուսական մրցանակներ ու պարգևներ:

Հաշվի առնելով այն փաստը, որ ըստ վիճակագրության՝ որոնողական համակարգերից օգտվողների մեծամասնությունը հարցման առաջին էջի արդյունքներից հետո դադարեցնում է որոնումը[4], կատարել ենք մշտադիտարկում մի շարք որոնողական համակարգերի (google.com, google.am, google.az, google.ru, bing.com, mail.ru, yandex.com, yahoo.com, youtube.com) առաջին էջի սահմաններում: Ստացվում է այնպես, որ հայկական կողմը լրջորեն հետ է մնում ադրբեջանականից՝ Խոջալուի դեպքե-

---

[1] **Ուլուբաբյան Բ.,** Արցախի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը, Երևան, 1994, էջ 350-352:
[2] **Մարտիրոսյան Ս.,** ՀՀ տեղեկատվական անվտանգության մի քանի հարցեր, 21-րդ ԴԱՐ, 2 (16), 2007, http://www.noravank.am/upload/pdf/248_am.pdf:
[3] Ոչ պաշտոնական քարոզչական տեղեկություններում զոհերի թիվն էլ ավելի է ուռճացվում՝ հասցվելով հազարների:
[4] **Հովհաննիսյան Մ.,** Պատմություն և մշակույթ, Հայագիտական հանդես Ա., Երևան, 2011, էջ, 7:

րի շուրջ սեփական կարծիքը մատուցելու առումով, քանի որ հարցման արդյունքում հակառակորդ կողմի ներկայացրած նյութերն ավելի շատ են: Google.com[1] և google.am-որոնողական համակարգում ռուսերեն *Ходжалы* բառի որոնման արդյունքում ստանում ենք հետևյալ պատկերը. այն է՝ 12 արդյունք, որոնցից 9 հակահայկական բովանդակության է, 3-ը՝ հայկական: Գրեթե նույն արդյունքը ստանում ենք նաև google.ru[2], yahoo.com[3], yandex.ru[4], mail.ru[5], bing.com[6], google.az[7], youtube.com[8] համակարգերում: Մշտադիտարկման արդյունքում առաջին էջի 10-12 արդյունքները գրեթե բոլոր որոնողական համակարգերում նույն կայքերն են առաջարկում: Բոլոր որոնման համակարգերում առաջին կամ լավագույն դեպքում երկրորդ տեղում «Վիքիպեդիա» բաց հանրագիտարանի էջի (որը կարող է խմբագրել յուրաքանչյուր այցելու, ինչի հետ կապված՝ այդ էջի բովանդակությունը ժամանակի ընթացքում փոխվում է), ռուսերեն տարբերակն էր Խոջալուի դեպքերի շուրջ, որը հակահայկական բովանդակություն ունի: Տարբեր տեղում արդեն գտնվում են xocali.net, sumgait.info կայքերը, որոնք ստեղծվել են հայերի կողմից Ղարաբաղյան հակամարտության լուսաբանման և ճշմարտությունը համացանցից մեծաքանակ օգտվողներին հասանելի դարձնելու, ապակողմնորոշումներից զերծ պահելու համար:

Բացի ռուսալեզու ադրբեջանամետ կայքերից, հակառակորդ կողմը մեծաթիվ ջանքեր և միջոցներ է ներդնում անգլալեզու գրականության ընդլայնման համար: Ադրբեջանական ՀԿ-ները, արտասահմանում ապրող ադրբեջանցիները և այլ թուրքալեզու միգրանտներ թուրքական համայնքային միավորումների հետ միասին համակարգված տեղեկատվական ցանց են կազմում ժողովրդական դիվանագիտության ճանապարհով Հայաստանի և հայության դեմ մղվող ինֆոքաղաքականության հարցում: Այդ ցանցն ապահովում է ոչ միայն ցանկալի տեղեկատվական հոսքերը, այլև կազմակերպում է «քաղաքացիական ակցիաներ»՝ փորձելով այդպիսով ազդել միջազգային կարծիքի ձևավորման վրա: Այս բնագավառում Ադրբեջանն օգտագործում է և՛ դիվանագիտական խողովակները, և՛ տվյալ երկրում իր համայնքային ռեսուրսներն ու նպատակայնորեն ձևավորված ՀԿ-ները: Միջազգային քաղաքական հարթությունում տարվող աշխատանքներից է նաև զանազան ճանապարհներով օտարերկրյա դիվանագետներին ադրբեջանամետ դիրքեր ներքաշելը, ինչպես նաև հակահայկական գործողություններով աչքի ընկած անձանց առաջխաղացմանն աջակցելը տարբեր երկրների քաղաքական ասպարեզներում: Օտարալեզու ռեսուրսների ուսումնասիրության արդյունքում հստակ կարող ենք նշել մի փաստ, այն է, որ թեև Թուրքիան չի համարվում չեզոք կողմ, բայց և չենք կարող հաշվի չառնել այն փաստը, որ Թուրքիան ջանասիրաբար օգնում է իր եղբայրակիցներին և ստանում համապատասխան աջակցություն՝ ինչպես հայոց Ցեղասպանության ժխտման, այնպես էլ Ղարաբաղի հետ կապված ցանկացած իրադարձության, և մասնավորապես Խոջալուում տեղի ունեցածի մեջ հայերին մեղքեր վերագրելու ուղղությամբ[9]:

Ի տարբերություն Խոջալուի դեպքերի շուրջ ռուսերեն լեզվով ստացված արդյունքների, անգլերենի դեպքում հակառակորդ կողմի առավելությունն ակնհայտ է: Եթե ռուսերենի դեպքում 10 ստացված արդյունքից 2 կայք հանդիպում էինք հայկական ուղղվածությամբ, ապա անգլերեն լեզվով իրականացված որոնման դեպքում գրեթե բացակայում է հայկական կողմից ներկայացվող կայքեր կամ նյութեր: Կրկին նույն որոնողական համակարգերում, սակայն այս անգամ անգլերեն Xocali, Xojaly բառերի որոնման դեպքում ստանում ենք հետևյալ արդյունքները. Google.com-Google.am[10], Google.ru[11], Google.az[12], Yahoo.com[13], Yandex.ru[14], Bing.com[15], Mail.ru[16]: Այստեղ լավագույն դեպքում կարող ենք հանդիպել մեկ կամ երկու արդյունքի հայկական բովանդակությամբ: Կրկին առավելությունն ադրբեջանամետ կայքերինն է:

---

[1] Google.am, https://www.google.am/search?hl=ru&q=ходжалы&ei=nfZjV_OGB8Wr6AT67KSoCw.
[2] Google.ru, https://goo.gl/Cg7wHh.
[3] Yahoo.com, http://yhoo.it/1Y2bflu.
[4] Yandex.ru, https://yandex.ru/yandsearch?lr=10262&text=ходжалы&redircnt=1466169243.1.
[5] Mail.ru, http://go.mail.ru/search?mailru=1&q=ходжалы.
[6] Bing.com, http://www.bing.com/search?q=ходжалы&go=&qs=n&form=QBLH&pq=ходжалы&sc=0-0&sp=-1&sk=.
[7] Google.az, https://www.google.az/search?hl=ru&q=ходжалы&ei=hfhjV4XIM4S1sQHaiqylCQ.
[8] Youtube.com, http://bit.ly/28ObD0r.
[9] **Մելքոնյան Ա.,** Պատմության կեղծարարության թուրք-ադրբեջանական մեթոդաբանական հիմքը, Երևան, 2011, էջ 84:
[10] Google.am, https://www.google.am/search?hl=ru&q=Khojaly&ei=X_ljV43CEeLJ6AShpYfwDA.
[11] Google.ru, https://goo.gl/Gv4YpU.
[12] Google.az, https://goo.gl/Iz7KGD.
[13] Yahoo.com, http://yhoo.it/1PAsEiO.
[14] Yandex.ru, http://bit.ly/1UVtpHo.
[15] Bing.com, http://bit.ly/1QdQW7L.
[16] Mail.ru, http://urla.ru/10000dod

Ադրբեջանական քարոզչության կարևորագույն բաղադրիչներից են հայ ժողովրդի պատմության կեղծումները, պատմական և նյութական, մշակութային արժեքների ոչնչացումը, դրանց նախապատմության կեղծումը, արհեստածին և գիտականորեն չհիմնավորված տեսակետների առաջքաշումը և դրանց հիմնավորման համար այլազգի վարձու հեղինակների ներգրավումը: Գրանցվել են օրինակներ, երբ համակարգչային պարզ գրաֆիկական ծրագրերի օգտագործմամբ կեղծվում է հայկական պատմական հուշարձանների ինքնությունը, այդ տեսքով արդեն դրանք զետեղվում են պետական հովանավորությամբ տպագրվող գրքերում[1]:

Քաղաքական հայտարարությունների, համաշխարհային համացանցը հեղեղած հրապարակումների, տոննաներով տպագրվող կեղծարարական գրականության, ադրբեջանական սփյուռքի կողմից կազմակերպվող միջոցառումներով և այլ ճանապարհներով Ադրբեջանը բազմաթիվ բեմերում արդեն հասել է Ղարաբաղի հարցում միակողմանի տեղեկատվության ներդրմանը: Տեղեկատվական պատերազմում մեր հակառակորդի կիրառած նոր մարտավարության էական առանձնահատկությունը նրա բովանդակության բացահայտ ֆաշիստականացումն է, որն իր արտահայտությունն է ստանում անգամ պետության առաջին դեմքի կողմից կիրառվող քարոզչական հնարքներում: Շատերը զարմանում են, թե ինչո՞ւ է Ադրբեջանի նախագահ Ի. Ալիևն անընդհատ կրկնում Ղարաբաղը «պատմական ադրբեջանական հող», իսկ ներկա Հայաստանի Հանրապետությունը՝ «Ադրբեջանի պատմական տարածքներում» ձևավորված պետություն հռչակող իր արդեն սովորական զառանցանքները: Ի վերջո, ո՛չ Ի. Ալիևն է ապուշ, ո՛չ էլ նրան ունկնդրողները: Տարածաշրջանի պատմությանը լավատեղյակ յուրաքանչյուր ոք գիտի, որ 1918 թ. առաջ աշխարհի քարտեզներում բացակայող պետության «պատմական տարածքների» մասին խոսելն առնվազն կեղծարարություն է: Բայց արի ու տես, որ Ի. Ալիևը շարունակում է երգել նույն երգն է՛լ ավելի աճող համառությամբ ու հետևողականությամբ: Թերևս այս ամենը ֆաշիստական Գերմանիայի քարոզչության պատասխանատու Գեբելսի ժամանակներից քաջ հայտնի՝ հանրային կարծիքի ապակողմնորոշման քարոզչական տեխնոլոգիան պատճենելու փորձ է: Քանզի միջազգային հանրությունը, զանազան կազմակերպությունները և պատմությանն անգիտակ օտարերկրացիները ներկայումս հայտնվել են մի իրավիճակում, երբ ամեն օր իրենց է մատուցվում միայն ադրբեջանական մեկնաբանությունը: Ուստի, անկախ նրանից, թե որքանով են պատմականորեն հիմնավորված Ադրբեջանի ղեկավարի պնդումները, նման բուռ համառությունն սկսում է դիտվել որպես սեփական իրավունքների համար պայքարող, իրավազրկված երկրի կեցվածք:

Անշուշտ, հայկական քարոզչությունն այնքան հնարավորություններ չունի, որ պատասխանի Ադրբեջանի կողմից արտանետվող ամեն մի հերյուրանքի, սակայն մեր պետության վարկանիշը պետք է համարենք ամենակարևոր կետն այս ողջ քարոզչական պայքարում: Մենք չենք կարող այդքան միջոցներ ծախսել տեղեկատվության ասպարեզում, սակայն կարող ենք հակառակորդին պատասխանել հենց նրա «զենքերով», այն է՝ համացանցում տեղադրվող յուրաքանչյուր կեղծարարության դեմ ուղղվող մեկնաբանությունների միջոցով: Համեմատության ցանկացած, անգամ ամենամակերեսային փորձ կարող է բացահայտել ողջ ճշմարտությունը, քանի որ մեր հակառակորդը գործում է առանց կեղծարարության միջոցների խտրության: Հայկական կողմից Խոջալուի դեպքերի շուրջ տարվող քարոզչության պասիվության խնդիրը նաև այն է, որ մենք իրականությունն ու իրողությունը ներկայացնում ենք մեծամասամբ միայն մայրենի լեզվով, այնինչ մենք մեզ ապացուցելու ոչինչ չունենք, մենք քարոզչական գրոհը պետք է տեղափոխենք արտաքին դաշտ, պետք է ունեցած ռեսուրսները կարողանանք հասանելի դարձնել արտաքին ընթերցողին, որպեսզի նրանց մոտ միայն ապատեղեկատվության վրա հիմնված կարծիք չկազմվի: Միջազգային հարթությունում քարոզչություն կատարելու համար բավարար միջոցներ ունենալը կարևոր հանգամանք է, սակայն այստեղ էլ կա մի կարևոր խնդիր և.ս. միայն շատ փող ունենալը դեռևս գերակայության հասնելու ճանապարհ չէ՝ մանավանդ կեղծիքներ տարածելով: Շատ կարևոր է արդյունավետ աշխատանք կատարելը՝ մենք միշտ փորձել են առաջնահերթ դիրքում դնել որակը, հետո նոր միայն ապահովել քանակի խնդիրը: Երբեմն մեր այս քայլն էլ է բերում իր անդառնալի հետևանքները: Ինչպես փորձն է ցույց տալիս՝ մեր հարևանների դեպքում հակառակ տրամաբանությունն է գործում, և այն որոշակի առումով իր արդյունքը տալիս է: Հայկական կողմը, ունենալով ամուր պատմական ու իրավաբանական ապացույցներ, համակարգված չի աշխատում հակաքարոզչության վրա: Խնդիրն այն է, որ միջազգային հանրությունը չի ձգտում հասնել ճշմարտության և վերցնում է պատրաստի տեղեկատվությունը, որը հիմնականում տրամադրում է ադրբեջանական կողմը, մոռանալով պատմական ճշմարտության մասին: Այս կերպ նաև Ադրբեջանում մի ամբողջ սերունդ դաստիարակվեց այն կեղծ տեսությամբ, թե Կովկասում ամենահին, ամենախելացի ու մշակույթով հարուստ ժողովուրդն իրենք են: Իսկ այսօր տեղեկատվական հակաքարոզչության առնչությամբ Հայաստանում

[1] **Աթանեսյան Ա.,** Հայաստանյան պատմության ադրբեջանական արդի կեղծարարությունների հարցի շուրջ. Պատմություն և մշակույթ. ընդդեմ կեղծիքի և ոտնձգության» հանրապետական գիտաժողովի հիմնադրույթներ, Երևան, 2011, էջ. 9:

հարց է բարձրանում. արդյոք Հայաստանի արտաքին քաղաքականությունը բավարար ջանքեր գործադրո՞ւմ է Ադրբեջանի ագրեսիվ քարոզչությունը կասեցնելու համար: Դիվանագետներն ասում են, որ շատ բան է արվում, սակայն յուրաքանչյուր արվածը չի բարձրաձայնվում: Ամենայն հավանականությամբ, դա իրոք այդպես է, եթե նկատի առնենք, որ ադրբեջանական քարոզչությունն առայժմ միայն իր սպասվածի հակառակ արդյունքն է ունենում: Այս ամենը նաև հասկանում են ադրբեջանցի և թուրք որոշ մտավորականներ, որոնց համար սեփական շահն առաջնային չէ սուտ տարածելու համար, և որոնք փորձում են իրենց ղեկավարության կացնային գործելաոճին հակադրել համամարդկային արժեքներ:

Ամենակարևոր հանգամանքներից մեկն այն է, որ հայկական քարոզչությանը հետևելով, վստահ կարող ենք ասել, որ հայկական կողմը միշտ հանդես է եկել համամարդկային դիրքերից և դրանով իսկ ադրբեջանական քարոզչությանը դրել «խաղից դուրս» վիճակում: Եվ այս ամենն էլ Բաքվի իշխանություններին ստիպել է ավելի ու ավելի կորցնել չափի զգացումը և ապացուցել, որ ոչ մի արժեք չկա: Կա միայն փող, որով կարելի է պատմություն և հեղինակություն գնել:

Այսպիսով, եթե փորձենք ընդհանուր վերլուծել կատարված դեպքերը, ստացված արդյունքները և ադրբեջանական կողմի վայնասունը, կարող ենք նշել մի կարևոր փաստ, որ ադրբեջանական աղբյուրները Խոջալուի դեպքերը համառորեն ուռճացնում են և տարածում հակահայկական հիստերիա՝ նպատակ ունենալով կեղծված դեպքերը ներկայացնել իբրև բացարձակ ճշմարտություն և վարկաբեկել հայ ժողովրդին միջազգային հանրության առջև: Այսքան փաստերից հետո խաղաղ բնակիչների մահվան պատճառ դարձած Խոջալուի դեպքերը բացառապես Ադրբեջանում իշխանության համար մղված քաղաքական ինտրիգների և պայքարի արդյունք են: Իրական պատճառներն առավել համոզիչ ներկայացված են իրենց իսկ՝ ինչպես իրադարձությունների ադրբեջանցի մասնակիցների և ականատեսների, այնպես էլ նրանց վկայություններում, ովքեր տեղյակ էին Բաքվում գտնվող դրանց ենթաաստառին: Ուստի, ադրբեջանական քարոզչությանն այլ բան չի մնում, քան աշխարհով մեկ փողահարել «հայերի գազանությունների» մասին, հեռարձակելով ահասարսուռ տեսարաններ և պղծված դիակներով լցված դաշտ, որպեսզի իր իսկ ձեռքով իրականացրած սեփական ժողովրդին «Ինքնացեղասպանության» ենթարկելու փաստը և նաև մեղքը բարդի հայերի վրա:

Այսօր էլ Ադրբեջանի պաշտոնական քարոզչությունը շարունակում է տեղի-անտեղի միջազգային ամենատարբեր ատյաններում և հանդիպումներում շահարկել Խոջալուի թեման: Եվ դա սպասելի ու հասկանալի է: Հասկանալի է, որովհետև Ադրբեջանը ստիպված է իր գործած մեղքերից պաշտպանվելու համար դավանել հարձակողական մարտավարություն: Այսօր Ադրբեջանի գործող իշխանությունը պարտադրված է հորինել, ցանկալին ներկայացնել իրականի փոխարեն և, որ շատ ցավալի է՝ նույն այդ հորինվածքին հավատալ... Ասել է թե՝ մեկընդմիշտ հրաժարվել արդարությունից և որդեգրել բարոյական անկման ճանապարհը...

Ելենա Զոհրաբյան

ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱԿԱՀԱՅ ԻՆՖՈՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԽՈՋԱԼՈՒԻ ԽՆԴԻՐԸ ՀԱՄԱՑԱՆՑՈՒՄ

Բանալի բառեր՝ տեղեկատվական պատերազմ, Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիր, Խոջալուի հիմնահարց, ապատեղեկատվություն, Խոջալու, Սումգայիթ, Բաքու, Կիրովաբադ, համացանցային որոնողական համակարգեր

Հոդվածում Խոջալուի հիմնախնդրի համատեքստում ներկայացվում է Ադրբեջանի և Հայաստանի կողմից տեղեկատվական քարոզչության ոլորտում կիրառվող մեթոդաբանության առանձնահատկությունները: Ներկայացվում է Խոջալու քաղաքում 1992 թվականի փետրվարին տեղի ունեցած դեպքերի լուսաբանումը թե՛ հայկական, և թե՛ ադրբեջանական աղբյուրներում: Այնուհետև անդրադարձ է կատարվում մշտադիտարկման արդյունքում ի հայտ եկած ադրբեջանական և հայկական կողմի համացանցային ռեսուրսներին: Ներկայացվում է հայկական կողմից տրվող համարժեք պատասխանները, մեթոդները, թե ինչպիսի քայլեր է ձեռնարկվում Ադրբեջանի հակահայկական քաղաքականության դեմ, ինչքանով է հայկական կողմը պատրաստ դիմագրավելու տվյալ կեղծիքներին, և ինչպիսի ռեսուրսների միջոցով է փորձում չեզոքացնել իր դեմ տարվող տեղեկատվական պատերազմը:

Елена Зограбян

АНТИАРМЯНСКАЯ ИНФОРМАЦИОННАЯ ПОЛИТИКА АЗЕРБАЙДЖАНА И ВОПРОС ХОДЖАЛЫ: ОСВЕЩЕНИЕ В ИНТЕРНЕТЕ

Ключевые слова: информационная война, Нагорно-Карабахский конфликт, Ходжалинский вопрос, дезинформация, Ходжалы, Сумгаит, Баку, Кировабад, веб-поисковые системы

В статье представлены особенности методологии в сфере информационной пропаганды Азербайджана и Армении в контексте Ходжалинского вопроса. Мы показали, как были освещены события, происходящие в городе Ходжалы в феврале 1992 года, в азербайджанских и армянских источниках. Затем были проанализированы интернет-ресурсы, выявленные в результате мониторинга азербайджанских и армянских источников. В статье также представлены ответы и шаги армянской стороны, предпринимаемые против антиармянской политики Азербайджана. Мы попытались выяснить, в какой степени армянская сторона готова противостоять азербайджанским фальсификациям событий и какими ресурсами необходимо обладать, чтобы нейтрализовать информационную войну против Армении.

Yelena Zohrabyan

AZERBAIJANI ANTI-ARMENIAN INFORMATION POLICY AND THE ISSUE OF KHOJALY IN THE INTERNET

Key words: information war, Nagorno-Karabakh conflict, the Issue Khojaly, disinformation, Khojaly, Sumgayit, Baku, Kirovabad, web search systems

The methodological peculiarities in the information propaganda of Azerbaijan and Armenia in the context of Khojaly are represented in the article. The coverage of events both in Armenian and Azerbaijani sources that took place in Khojaly in February in 1992 is also represented. We touched upon the results of monitoring that reveal the web resources of Armenia and Azerbaijan. We tried to introduce the relevant responses, methods of the Armenian side, the steps against the Azerbaijani anti-Armenian policy, to what extent the Armenian side is able to resist those falsifications, and through what means they try to neutralize the information war.